



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԱՏԱՐԵՑ ԴԱԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Երկուշաբթի, 18 Մայիսի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան կատարեց Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան նոր գրասենեակին բացումը, ընկերակցութեամբ հաստատութեան պատասխանատուներու եւ Կլենտէյլ քաղաքի կրթական համակարգի ներկայացուցիչներու:

Ծանօթ է, որ Դաւթեան-Մարիամեան Կրթ. Հաստատութիւնը աւելի քան 20 տարիէ ի վեր երախտաշատ աշխատանք կը տանի, Կլենտէյլի, Պըրպէնքի, Նորթ Յոլիվուտի եւ Լոս Անճելըսի շրջանի հայաշատ այլ քաղաքներու պետական վարժարաններ յաճախող հայ աշակերտներու համար հայերէն լեզուի ու մշակոյթի դասընթացքներ կազմակերպելով: Առ ի գնահատանք սերնդակերտ գործին, Կլենտէյլի կրթական համակարգի վարչութիւնը Դաւթեան-Մարիամեան Կրթ. Հաստատութեան ընդարձակ բաժին մը յատկացուցած է Էտիսըն վարժարանի նախկին շէնքին մէջ, որ վերանորոգուած ու սարքաւորուած է:

Բացման հանդիսութեան, Առաջնորդ Սրբազանին կողքին էին Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան եւ Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Թորոսեան: Ժապաւենի հատումի արարողութենէն ետք, տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն, ապա, սրահին մէջ կիրարկուեցաւ պաշտօնական յայտագիր մը: Խօսք առաւ Առաջնորդ Սրբազանը եւ գնահատանքով արտայայտուեցաւ Դաւթեան-Մարիամեան Կրթ. Հաստատութեան ծառայական աշխատանքին մասին, բարձր գնահատեց հայ մանուկն ու պատանին մեր մշակոյթին կամրջող դաստիարակներու անձնոյր աշխատանքը եւ դրուատեց Ազգ. Առաջնորդարանին հետ Հաստատութեան գործակցութեան ոգին:

Խօսք առին ու գնահատականներ արձանագրեցին նաեւ Կլենտէյլի կրթական համակարգի պատասխանատուներ եւ այլ ներկայացուցիչներ: Հաստատութեան ներկայացուցիչները շնորհակալութիւն ու երախտագիտութիւն արտայայտեցին Առաջնորդ Սրբազանին ու Կլենտէյլի կրթական համակարգի պատասխանատուներուն: Աշակերտներ գեղարուեստական յայտագիրին մասնակցութիւն բերին երգով ու արտասանութեամբ:

## **PRELATE PRESIDES OVER OPENING CEREMONY OF NEW DAVIDIAN & MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION CENTER**

On the evening of Monday, May 18<sup>th</sup>, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the opening of the new center of Davidian and Mariamian Educational Foundation (DMEF) at the Pacific Education Center in Glendale. Participating in the ceremony were DMEF Board members and Glendale Unified School District board members. Accompanying the Prelate were H.E. Archbishop Yeprem Tabakian and Rev. Fr. Gomidas Torossian.

Following the ribbon cutting ceremony, a reception followed, after which guests gathered in the auditorium for the official portion of the program. In his remarks, the Prelate highly commended the efforts of the board members over the past 20 years in providing a quality Armenian education to our youth and bridging them to our heritage and culture, and reaffirmed the collaboration that continued between the Prelacy and the foundation.

Remarks were also delivered by Glendale Unified School District members and representatives and by Davidian and Mariamian Educational Foundation board members who thanked both the Prelate and School District members for their support.